ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/43 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Շուշանիկ Հովսեփյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Շուշանիկ Հովսեփյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 20.11.2017թ. բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 23.10.2017թ. ժամը 11:00-ին:

Նույն օրով կազմվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում 13.11.2017թ., այն է հայտերի բացման նիստից ավելի քան քսան օր հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 33-րդ հոդվածի 8-րդ մասը պահանջում է, որպեսզի հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրութունը հրապարակվի տեղեկագրում:

Սակայն բերված օրինակից ակնհայտ է դառնում, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում ոչ թե հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը, այլ միայն 13.11.2017թ., այն է հայտերի բացման նիստից ավելի քան 20 օր հետո:

Վերոհիշյալի արդյունքում կոպտորեն խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությունը www.old.gnumner.am կայքում հրապարակվել է սխալ ծածկագրի տակ, նշվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-4/1» ծածկագիրը, որը անհնարին է դարձրել այդ ծածկագրով փաստաթղթի որոնումը:

Նույն հրապարակման տակ տեղադրվել է նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը, որը իբրև թե կայացել է 23.10.2017թ. ժամը 11:00-ին, ինչն անհնար է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքաբերը Խորհրդին խնդրել է պարտավորեցնել չկայացած հայտարարել ՀՀ ՊՆ կարիքների համար բեռնատար մեքենաների

պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը:

Շուշանիկ Հովսեփյանի կողմից ի լրումն բողոքի 23.11.2017թ. Խորհրդին ներկայացվել է գրություն, որով բողոքաբերը հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի հայտերի բացման նիստը գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվել է 23.10.2017թ. 11:00-ին, և կազմվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավիրել է գնահատող հանձնաժողովի մեկ այլ նիստ և այս անգամ կազմել է 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությունը:

Գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 6.1 կետի համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը (նաև նույն օրվա թիվ 3 արձանագրությունը) հրապարակվել է տեղեկագրում միայն 13.11.2017թ., այն է հայտերի բացման նիստից ավելի քան 20 օր հետո:

Բացի այդ, Ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը 13.11.2017թ. հրապարակվել է հին տեղեկագրում, այն է www.old.gnumner.am կայքում, մինչդեռ սույն

թվականի հոկտեմբերի մեկից բոլոր հայտարարությունները հրապարակվում են նոր տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում:

Ավելին, անգամ www.old.gnumner.am կայքում հրապարակված Ընթացակարգի հայտերի բացման, ինչպես նաև հայտերի գնահատման նիստերի արձանագրությունները հրապարակվել են սխալ ծածկագրի տակ, ինչն անհնարին էր դարձնում նշված արձանագրության որոնումը պաշտոնական տեղեկագրում:

Բողոքաբերը հայտնել է, որ հայտերի բացման օրվանից հետո հետևելով պաշտոնական կայքին, փորձել է որևէ տեղեկատվություն ստանալ հայտերի բացման նիստի արդյունքների վերաբերյալ, սակայն ապարդյուն: Տեղեկատվությունը չի եղել հրապարակված նոր տեղեկագրում, իսկ հին տեղեկագրում հրապարակված է եղել սխալ ծածկագրով, ինչն անհնարին էր դարձնում հայտերի բացման նիստի վերաբերյալ որևէ տեղեկատվության հայթհայթումը և անհրաժեշտության դեպքում՝ դրա բողոքարկումը:

Վերոհիշյալի արդյունքում ընթացակարգով շահագրգռված ցանկացած անձ զրկվել է հայտերի բացման նիստի արդյունքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, այդ թվում նաև՝ իր կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհնաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Բացի այդ, նույն արձանագրության 6.1 կետով գնահատող հանձնաժողովի կայացրած որոշմամբ նաև չի նշվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնելու հստակ վերջնաժամկետ, այլ ընդամենը վերացական նշվել է գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերի համաձայն՝

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3)տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային

օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Վերոհիշյալ իրավական նորմերի և առկա փաստաթղթերի ու փաստերի համադրությունից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել մի շարք խախտումներ, մասնավորապես.

1. Նույն օրը՝ 23.10.2017թ., նույն ժամին՝ 11:00-ին, հրավիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երկու նիստ, որի վերաբերյալ կազմվել են երկու արձանագրություն՝ թիվ 2 և թիվ 3:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» Ընթացակարգի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է քսան օր անց՝ 13.11.2017թ.:

3. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ընթացակարգի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությունը հրապարակվել է հին տեղեկագրում:

4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է սխալ ծածկագրի տակ:

5. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով Ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը չի պարունակել Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը:

6. Հայտերի գնահատումը կատարվել է ավելի քան քսան օր:

7. Թիվ 3 արձանագրության 6.1 կետով գնահատող հանձնաժողովի կայացրած որոշմամբ նաև չի նշվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնելու հստակ վերջնաժամկետի ամսաթիվ, այլ ընդամենը վերացական նշվել է «գնահատելու վերջնաժամկետտի օրը, ժամը 11:00-ն»:

Վերոհիշյալ խախտումները հանգեցրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերի, 34-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի և Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների խախտմանը: Արդյունքում խախտվել է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով երաշխավորված գնման գործընթացի հրապարակային հիմունքներով կազմակերպման սկզբունքը, քանզի անձինք զրկվել են տեղեկագրից

հայտերի բացման և արդյունքների գնահատման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, ինչն էլ էլեկտրանային փոստի վատթար աշխատելու հետևանքով կարող էր վերջիններիս ընդհանրապես զրկել երկրորդ փուլի փաստաթղթեր ներկայացնելու մասին տեղեկացված լինելու հնարավորությունից կամ տվյալ արձանագրություններով կայացրած որոշումները բողոքարկելու հնարավորությունից:

Բողոքաբերը վերոհիշյալ գրությամբ բողոքի պահանջը վերաշարադրել է հետևյալ ձև.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությունը համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին և շտկված արձանագրությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ճիշտ ծածկագրով հրապարակել տեղեկագրում:

2. Որպես հետևանք՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 4.2 կետով կայացրած որոշումը, այն է՝ մասնակիցներից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև նույն արձանագրության 6.1 կետով կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ ներկայացնելու գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Բողոքի սույն լրացումով ներկայացված 1-3 կետերի պահանջները ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից չբավարարվելու դեպքում՝ թույլ տրված խախտումների հիմքով պարտավորեցնել ՀՀ ՊՆ-ին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը:

Շուշանիկ Հովսեփյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.11.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով և ի լրումն բողոքի 24.11.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 24.11.2017թ. թիվ ԴՎԱ/4257 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ համաձայն չէ Բողոքաբերի այն հարցադրմանը, թե իբր գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, քանի որ բացման նիստը սկսվել է 23.10.2017թ. և ավարտվել 13.11.2017թ., իսկ հայտերի բացման նիստի ավարտի օրն էլ բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում: Ընդ որում՝ մրցույթը իրականացվել է էլեկտրոնային եղանակով և գնումների համակարգողը Armeps համակարգով ստանում է հանձնաժողովի նախագահից առաջադրանք, որից հետո ստացված տվյալների հիման վրա կազմում է արձանագրություն և հրապարակում տեղեկագրում, իսկ առաջադրանքը գնումների համակարգողին ուղարկվում է գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատումից հետո: Էլեկտրոնային գնահատումը իրականացվել է բացումից հետո 20 օրվա ընթացքում, ինչը Պատվիրատուի կարծիքով ողջամիտ է համարվում այն դեպքում, երբ մրցույթը բաղկացած է 318 չափաբաժիններից, մասնակիցները թվով 14-ն են, և գնահատող հանձնաժողովի անդամները թվով 5-ը, ինչպես նաև 5 չափաբաժնի մասով վարվել են բանակցություններ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը համաձայն է այն հարցադրման հետ, որ թիվ 2 արձանագրությունը տեղեկագրում «ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրի փոխարեն հրապարակվել է «ԲԸԱՊՁԲ-4/1» ծածկագրով, սակայն համաձայն չի բողոքաբեր Շուշանիկ Հովսեփյանի այն հարցադրմանը, որ մեկ տառի սխալը անհնարին է դարձրել այդ ծածկագրով փաստաթղթի որոնումը, քանի որ բավական է www.old.gnumner.am կայքի որոնում դաշտում մուտքագրել մրցույթի ծածկագիրն, այն է՝ 4/1, որից հետո համակարգը կներկայացներ «ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով մրցույթին վերաբերող ամբողջ

տեղեկատվությունը: Իսկ տեղեկագրում տեղ գտած մեկ տառի սխալը միայն տեխնիկական վրիպակի արդյունք է, ավելին, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի՝ ըստ էության ձևական սխալ է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Շուշանիկ Հովսեփյանի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.11.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2017/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերի բացման նիստը նշանակվել է 23.10.2017թ. ժամը 11:00-ին:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 23.10.2017թ. ժամը 11:00-ին կազմվել են հայտերի բացման թիվ 2 և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունները:

3. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1»** ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի **23.10.2017թ. ժամը 11:00-ի** հայտերի բացման նիստի թիվ 2 և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ

3 արձանագրությունները հրապարակվել են www.old.gnumner.am համացանցային կայքում **13.11.2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-4/1»** ծածկագրի տակ:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով Շուշանիկ Հովսեփյանի 20.11.2017թ. բողոքը և ի լրումն բողոքի 24.11.2017թ. գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.11.2017թ. թիվ ԴՎԱ/4257 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության, 3-րդ և 8-րդ մասերի համաձայն՝

1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա-գ» ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 23.10.2017թ. ժամը 11:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման օրը՝ 23.10.2017թ. ժամը 11:00-ին կազմվել է երկու արձանագրություն, որոնցից՝ թիվ 2 արձանագրությունը վերնագրվել է հայտերի բացման, իսկ մյուսը՝ թիվ 3 արձանագրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի նիստի արձանագրություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությամբ ամրագրվել է, որ սահմանված ժամկետում http://armeps.am էլեկտրոնային կայքում ներբեռնվել են թվով 14 մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ: Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են http://armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է նաև թիվ 3 արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն), որի վրա որպես արձանագրության ամսաթիվ և ժամ նույնպես նշվել է 23.10.2017թ. ժամը 11:00:

Արձանագրության 3-րդ կետով ամրագրվել են Ընթացակարգի արդյունքներով առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալները:

Միևնույն ժամանակ, նույն արձանագրության 3.3-րդ կետով ամրագրվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի 65-րդ, 138-րդ, 149-րդ, 214-րդ, և 234-րդ չափաբաժինների համար մասնակիցների առաջարկած նվազագույն գները եղել են հավասար, իսկ 81-րդ և 82-րդ չափաբաժիններում մասնակցի կողմից առաջարկած գինը գերազանցել է պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 31.10.2017թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցների հետ հրավիրել է միաժամանակյա բանակցություններ:

Նշված մասնակիցներին միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ ծանուցումը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է **27.10.2017թ.:**

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները սահմանում են, որ՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. ***հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է,*** և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

Միևնույն ժամանակ նույն կետի «գ» ենթակետը սահմանում է, որ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության մեջ առկա չէ որևէ տեղեկատվություն ***հայտերի բացման նիստը կասեցնելու*** վերաբերյալ, մինչդեռ, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հանձնաժողովի նիստը ենթակա է կասեցման, այն դեպքում, երբ նույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կարգով հնարավոր չէ միաժամանակյա բանացություններն իրականացնել հայտերի բացման նիստում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին ծանուցումն ուղարկվել է 27.10.2017թ., հետևաբար մինչ այդ, գնահատող հանձնաժողովը, համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի, պետք է կայացներ նիստը կասեցնելու մասին համապատասխան որոշում: Ընդ որում միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է 27.10.2017թ., մինչդեռ հայտերի բացումը տեղի է ունեցել 23.10.2017թ., այսինքն նշված ծանուցումն ուղարկվել է մասնակիցներին հայտերի բացումից հետո չորս աշխատանքային օր անց, այն էլ առանց կասեցնելու հայտերի բացման նիստը:

Բացի այդ, համաձայն մասնակիցներին ուղարկված ծանուցմանը, գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները հրավիրվել և համապատասխան չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները որոշվել են ***31.10.2017թ. ժամը 11:30-ին***, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության մեջ որպես հայտերի բացման նիստի ավարտման օր նշվել և արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է միայն 13.11.2017թ., այսինքն՝ բանացությունների իրականացումից 9 աշխատանքային օր հետո միայն:*** Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Խորհուրդն արձանագրում է, որ 31.10.2017թ. ժամը 11:30-ին հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում որոշվել են Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցները, ուստի հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվեր

տեղեկագրում առնվազն բանակցություններին հաջորդող աշխատանքային օրը, մինչդեռ տեղեկագրում հրապարակվել է միայն 13.11.2017թ.:

Դրա հետ մեկտեղ նույն արձանագրության 2-րդ կետով ամրագրվել են տեղեկություններ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

Այսպես, Արձանագրության՝

3.1 կետի համաձայն՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

3.2 կետի համաձայն՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են.

3.3 մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «Արկոմպ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես բոլոր փաստաթղթերում էլեկտրոնային ստորագրությունը արտատպվելու դեպքում անտեսանելի է, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Արկոմպ» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով, հիմք ընդունելով Արձանագրության վերոհիշյալ դրույթները Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի մասնակիցների հայտերի մեջ չեն արձանագրվել այնպիսի անհամապատասխանություններ, որոնց առկայության դեպքում կիրառվում են Կարգի 41-րդ կետի պահանջները, այն է հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը: Այսինքն առկա չէր մասնակիցների կողմից ներկայացված՝ հայտում արձանագրված անհամապատաս-

խանությունը շտկելու անհրաժեշտությամբ պայմանավորված նիստը հետաձգելու հիմքերը նույնպես:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Ընդ որում հայտերի բացման նիստի արձանագրության մեջ պետք է նշվեն՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Վերոհիշյալ նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայտերի բացման նիստի ավարտին կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի այն բոլոր տեղեկությունները, որոնք ամրագրված են Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասում: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հոդվածը նախատեսում է նաև այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են ձեռք բերվել միայն Կարգով նախատեսված համապատասխան գործընթացների արդյունքում (գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման անհրաժեշտությունը՝ առաջին և

հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար), ուստի Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, որի համաձայն հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվի տեղեկագրում, պահպանելու համար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը սահմանված կարգով ենթակա է կասեցման: Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ քննարկվող արձանագրությունների մեջ նիստը կասեցնելու վերաբերյալ որևէ դրույթ ամրագրված չէ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քննարկվող արձանագրությունների մեջ չեն նշվել Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված մասնակիցների հասցեները: Իսկ ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվությանը, ապա գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 6.1 կետում հաջորդ նիստի օրը չի նշվել, այլ նշվել է միայն ժամը և վայրը:

Այսպես Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը, համաձայն գնահատող հանձնաժողովի կողմից 23.10.2017թ. կազմված թիվ 3 արձանագրության, տևել է հայտերը բացելուց հետո քսան օրացույցային օր, որի ընթացքում հրավիրվել են նաև գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, ընդ որում համաձայն նույն արձանագրության, նիստը գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշմամբ չի կասեցվել և համաձայն նույն արձանագրությամբ որպես հայտերի բացման նիստի ավարտման օր նշվել և արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է միայն ***13.11.2017թ.***, մինչդեռ Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի թիվ 2 և թիվ 3 արձանագրությունները www.old.gnumner.am տեղեկագրում 13.11.2017թ. հրապարակվել է ոչ թե «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-**ԲՄԱՊՁԲ**-4/1» այլ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-**ԲԲԱՊՁԲ**-4/1»

ծածկագրի տակ, որպիսի հանգամանքը կարող է խոչընդոտել անձանց կողմից ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրություններին և դրանց հիման վրա կայացված որոշումներին տեղեկացված լինելու հնարավորությանը և հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված գնման գործընթացի հրապարակային կազմակերված լինելու սկզբունքի խախտմանը:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրության վերը նշված պահանջները, ուստի Խորհուրդը գտնում է, որ Շուշանիկ Հովսեփյանի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները հրապարակվել են հին տեղեկագրում, այն է՝ www.old.gnumner.am կայքում, մինչդեռ պետք է հրապարակվեին նոր տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, ապա Խորհուրդը գտնում է, որ նման պնդումն անհիմն է, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը և հրավերը հրապարակված է www.old.gnumner.am համացանցային կայքում, ուստի վերջինիս հետ կապված բոլոր տեղեկությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան շրջաբերականի, նույնպես պետք է հրապարակվեն www.old.gnumner.am համացանցային կայքում:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի մատնանշված այն փաստին, որ Արձանագրության 6.1 կետով չի նշվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու հստակ վերջնաժամկետ, ապա Խորհուրդը հայտնում է, որ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հետևաբար որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետի վերաբերյալ

տեղեկատվությունը նշվում է ոչ թե արձանագրության, այլ համապատասխան ծանուցման մեջ:

Միևնույն ժամանակ Բողոքաբերը վկայակոչել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը, որոնց համաձայն՝

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Այս առումով Խորհուրդն անհրաժեշտ է գտնում նշել, որ նշված նորմերը վերաբերում են հայտերի գնահատմանը, այն է, երբ գնահատող հանձնաժողովը գնահատում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունները) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Մինչդեռ բողոքի քննության առարկան հանդիսանում է հայտերի բացման նիստի հետ կապված գնահատող հանձնաժողովի գործողությունները, ուստի Խորհուրդը գտնում է, որ վերը նշված հարցի քննարկումը դուրս է սույն բողոքի շրջանակներից:

Ինչ վերաբերում է Ընթացակարգը չկայացած հայտարարելու Բողոքաբերի պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տրված վերը նշված խախտումները բավարար հիմք չեն հանդիսանում ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու համար: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Շուշանիկ Հովսեփյանի բողոքը սույն պահանջի մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Շուշանիկ Հովսեփյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.11.2017թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**